

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի կողմից իրականացված քննարկումների, նվիրատուների և նվիրառուների հետ հանդիպումների արդյունքում վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք չեն նպաստում Հայաստանում նվիրատվության և բարեգործության ինստիտուտների զարգացմանը:

Հարկային օրենսգրքի 123-րդ հոդվածի կարգավորումները թույլ են տալիս գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին, մանկատներին, բժշկական հաստատություններին, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը նվազեցնել շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով: Սույն դրույթը նպատակ ունի ընձեռել նվիրատվություն իրականացնելու հնարավորություն:

Հարցումները ցույց են տալիս, որ հայաստանյան ԲՈւՀ-երի համար նվիրատվությունները կարևոր դեր ունեն և նպաստում են ինչպես գույքային բազայի համալրմանը, այնպես էլ լսարանների վերանորոգմանն ու կահավորմանը, լաբորատորիաների ստեղծմանը, բարձրարժեք թվային ծրագրերի հասանելիությանը և ուսման որակի բարելավմանն ուղղված այլ ակտիվների ձեռքբերմանը:

Օրինակ, Հայաստանում ֆրանսիական համալսարանը միայն դրամական փոխանցումների տեսքով (գույքային նվիրատվությունները չհաշված) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձանցից 2020-2023թթ. ընթացքում ստացել է 234 000 եվրո ընդհանուր ծավալով անհատույց ակտիվներ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը վերջին 6 տարիների ընթացքում ստացել է մոտ 30 մլն դրամի նվիրատվություններ:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը նախորդ 3 տարիների ընթացքում ստացել է ավելի քան 400 մլն դրամի չափով նվիրատվություններ, որոնց բացվածքը ներկայացված է ստորև:

	2021	2022	2023	ԸՆԴԱՄԵՆԸ
Եկամուտներին շնորհներ	վերաբերող 79,176,424	122,204,234	69,843,906	271,224,564

Ակտիվներին շնորհներ	վերաբերող	5,758,400	56,286,817	75,747,368	137,792,585
		84,934,824	178,491,051	145,591,274	409,017,149

Հարկ է նշել նաև, որ բազմաթիվ տնտեսավարողներ պատրաստակամություն են հայտնում իրականացնելու ավելի շատ նվիրատվություններ կրթական և գիտական հաստատություններին՝ նպատակ ունենալով կարճաժամկետ հատվածում նպաստելու իրենց հետաքրքրող մասնագիտությունների գծով շրջանավարտների որակավորման աճին, ինչպես նաև երկարաժամկետ հատվածում այդ հաստատություններում միջազգային չափանիշներին համապատասխան միջավայրի ձևավորմանը: Նման վարքագծի խրախուսմանը չի նպաստում համախառն եկամտի 0.25 տոկոսից ավել չափով կատարված նվիրատվության հարկումը:

Նշված կարգավորումը արդարացված չէ նաև այնպիսի ոչ առևտրային կազմակերպություններին իրականացվող նվիրատվությունների մասով, որոնց գործունեության նպատակները համահունչ են պետության նպատակներին և ունեն թափանցիկության բավարար մակարդակ: Օրինակ, Ջինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամին ուղղված նվիրատվությունները կտրուկ աճել են ճգնաժամային իրավիճակում (2020թ.)՝ էապես խնայելով պետության միջոցները, որոնք ուղղվել են զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին:

Ջինապահի հիմնադրամին իրականացված նվիրատվությունները

	2017- 2019	2020	2021	2022	2023	2024 (կիսամյակ)	2017- 2024
ՀՀ դրամով իրականացված նվիրատվություններ, հազար դրամ	296,495	4,380,043	765,793	301,333	173,750	46,484	5,937,198

2. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Կարգավորման նպատակը կրթության, գիտության ոլորտներում ոչ պետական միջոցների հաշվին իրականացվող ներդրումների աճն է, կրթություն (գիտություն) – բիզնես կապի ամրապնդումը, ինչպես նաև պետության համար առաջնային նշանակություն ունեցող հիմնադրամներին իրականացվող նվիրատվությունների խրախուսումը:

3. ԱՐԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու միջոցով հնարավորություն տալ շահութահարկ վճարողներին՝ իրենց համախառն եկամտի մինչև 2.5%-ի չափով պետական հանրակրթական դպրոցներին, ԲՈՒՀ-երին և նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական կրթական հաստատություններին իրականացված նվիրատվությունները նվազեցնել համախառն եկամտից:

Նույն մոտեցումը առաջարկվում է կիրառել նաև Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին իրականացվող նվիրատվությունների մասով:

Առաջարկի համար որպես հիմք ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը, որը փաստում է, որ բազմաթիվ երկրներ առավել նպաստավոր պայմաններ են ստեղծել նվիրատվությունների համար, քան Հայաստանը: Մասնավորապես՝

Վրաստանում¹ հանրային իրավունքի իրավաբանական անձանց (պետական դպրոցներ, գիտահետազոտական ինստիտուտներ, ԲՈՒՀ-եր, միջին մասնագիտական հաստատություններ) ապրանքների և ծառայությունների անհատույց մատակարարումը (տրամադրումը) ազատվում է շահութահարկից:

ԱՄՆ-ում² կազմակերպությունները և ֆիզիկական անձինք կարող են իրենց հարկման բազան նվազեցնել գիտական, կրթական, բարեգործական և մի շարք այլ հաստատություններին իրականացված նվիրատվությունների գումարի, բայց ոչ ավելի քան հարկվող շահույթի 10%-ի չափով: Ընդ որում, նշված շեմից ավել իրականացված նվիրատվությունները կարող են նվազեցվել՝ ի հաշիվ հաջորդող 5 տարիների թույլատրելի չափի:

Ֆինլանդիայում կազմակերպությունների կողմից մինչև 250.000 եվրոյի չափով նվիրատվությունները Եվրոպական Տնտեսական Տարածքի որոշ համալսարանների նվազեցվում են հարկվող շահույթից:

Գերմանիայում ոչ առևտրային կազմակերպություններին իրականացված նվիրատվությունների գումարները նվազեցվում են հարկվող շահույթից՝ մինչև 20%-ի չափով:

Իտալիայում դպրոցներին, համալսարաններին և գիտական հետազոտությունների նպատակով նվիրատվությունների համար սահմանված են հարկային արտոնություններ՝ մինչև հարկվող շահույթի 10%-ի չափով:

¹https://matsne.gov.ge/ka/document/view/1043717?impose=translateEn&publication=175&fbclid=IwAR1zE1KofB4vu5uQfDxJY6enk7VKLykWemOz_KoKKHTOQGQedWlzbZbnZM, հոդված 98³

²<https://www.taxpolicycenter.org/briefing-book/what-tax-treatment-charitable-contributions>

<https://www.irs.gov/charities-non-profits/charitable-organizations/exempt-purposes-internal-revenue-code-section-501c3#:~:text=The%20exempt%20purposes%20set%20forth,cruelty%20to%20children%20or%20animals>

Բուլղարիայում նախակրթարաններին, կրթական և գիտական հաստատություններին իրականացված նվիրատվությունների գումարները նվազեցվում են հարկվող շահույթից՝ մինչև 10%-ի չափով³:

Ռուսաստանի հարկային օրենսգրքում իրականացված փոփոխությունների համաձայն՝ 2023թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտնում դրույթներ՝ համաձայն որոնց ՌԴ սուբյեկտների կողմից ընդունված օրենքների հիման վրա կարող է սահմանվել, որ հարկ վճարողներն իրավունք ունեն կրթական կազմակերպություններին անհատույց փոխանցված գույքի (դրամական միջոցների) արժեքի մինչև 100%-ի չափով նվազեցնել այդ սուբյեկտների բյուջե փոխանցվող շահութահարկի գումարները⁴:

Միաժամանակ, գույքի և դրամական միջոցների անհատույց տրամադրումը պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ոչ առևտրային կրթական կամ գիտական հաստատություններին, ազատվում է ԱԱՀ-ից⁵:

Վերը նշված երկրներից բացի առևտրային կազմակերպությունների կողմից նվիրատվությունները խրախուսող հարկային արտոնություններ են կիրառվում նաև հետևյալ երկրներում՝ Ավստրալիա, Արգենտինա, Ավստրիա, Բելգիա, Կանադա, Չիլի, Չեխիա, Էստոնիա, Հունաստան, Հունգարիա, Հնդկաստան, Ինդոնեզիա, Իռլանդիա, Ճապոնիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդերլանդներ, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Պորտուգալիա, Ռումինիա, Սինգապուր, Սլովենիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Շվեյցարիա, Միացյալ Թագավորություն, Կոլումբիա, Իսրայել, Սլովակիա: Նշված երկրներում, որպես կանոն, համախառն եկամտից նվազեցման թույլատրելի չափն էապես մեծ է Հայաստանում գործող չափից՝ պայմանով, որ նվիրատվություններն իրականացվեն որոշակի չափանիշների բավարարող բարեգործական կամ այլ հանրային բարիք ստեղծող կազմակերպությունների: Օրինակ՝ Սլովակիայում հարկվող շահույթից կարող է նվազեցվել բարեգործության նպատակով իրականացված ծախսերի մինչև 2%, Չեխիայում՝ 5%, Իտալիայում, Ավստրիայում, Իսպանիայում, Վրաստանում⁶, 10%, Գերմանիայում և Շվեյցարիայում՝ 20%, Նիդերլանդներում՝ 50%, Իռլանդիայում, ՄԹ-ում և Ավստրալիայում՝ 100%^{7,7}:

Ֆրանսիայում կազմակերպությունները կարող են իրենց շահութահարկը նվազեցնել բարեգործության գումարի մինչև 60%-ի չափով, բայց ոչ ավել քան **տարեկան հասույթի 0.5%-ը**⁸: **Արգենտինայում** բարեգործության գումարը կարող է նվազեցվել մինչև **հասույթի 5%-ի** չափով: **Մեքսիկայում** կազմակերպությունները մասնավոր բարեգործական և պետական հաստատություններին իրականացվող նվիրատվությունների գումարները

³ <https://efa-net.eu/wp-content/uploads/2018/12/EFA-Tax-Survey-Report-Dec-2018.pdf>

⁴ <http://ivo.garant.ru/#/document/405604347/paragraph/5/doclist/180/showentries/0/highlight/430-%D0%A4%D0%97:0>

⁵ <http://nalog.garant.ru/fns/nk/0c5956aa76cdf561e1333b201c6d337d/>


⁶ https://matsne.gov.ge/ka/document/view/1043717?impose=translateEn&publication=175&fbclid=IwAR1zE1KofB4vu5uQfDxjY6enk7VKLykWemOz_KoKKHTOQGQedWljzjBznZM

⁷ <https://www.oecd-ilibrary.org/sites/559f2c2c-en/index.html?itemId=/content/component/559f2c2c-en#section-d1e15223>

⁸ <https://efa-net.eu/wp-content/uploads/2018/12/EFA-Tax-Survey-Report-Dec-2018.pdf>

կարող են նվազեցնել ընթացիկ տարվա համախառն եկամտից՝ նախորդ տարվա հասույթի մինչև 7%-ի չափով⁹:

* Արտոնության բազաների միասնականության նպատակով հիմք է ընդունվել շահութաբերության 20% պայմանական չափը:



* Արտոնության բազաների միասնականության նպատակով հիմք է ընդունվել շահութաբերության 20% պայմանական չափը:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ակնկալվում է, որ նախագծի ընդունման արդյունքում բիզնեսի կողմից ավելի շատ միջոցներ կուղղվեն պետական ԲՈւՀ-երի, միջին մասնագիտական և հանրակրթական հաստատությունների կարիքների բավարարմանը: Դա որոշակիորեն կբավարարի նշված կրթական հաստատությունների դրամական պահանջները, մյուս կողմից՝ կստեղծի կրթություն-բիզնես ամուր կապերի հիմք՝ ապահովելով կադրերի պատրաստման և հետազոտությունների իրականացման ինստիտուցիոնալ բնույթի հարաբերություններ:

Նախագծի ընդունմամբ լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում՝ հաշվի առնելով նվիրատվությունների արդյունքում ԲՈւՀ-երի և միջին մասնագիտական կրթական հաստատությունների կարիքների բավարարմանը զուգահեռ պետական բյուջեից իրականացվող ծախսերի կրճատման հնարավորությունը:

ԲՈւՀ-երի և խոշոր ու միջին բիզնեսների շրջանում իրականացված հարցման հիման վրա կանխատեսվել է, որ նախագծի ընդունման արդյունքում կրթական

⁹ <https://www.oecd-ilibrary.org/sites/559f2c2c-en/index.html?itemId=/content/component/559f2c2c-en#section-d1e15223>

հաստատություններին ուղղվող նվիրատվությունների ծավալը կավելանա միջինում 25%-ով:

5. ԿԱՊԸ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

Նախագծի ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի «4.3 Կրթություն» բաժնից, այդ թվում դպրոցների, բուհերի և մասնավոր հատվածի միջև արդյունավետ համագործակցություն ստեղծվելու նպատակից:

6. ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Նախագիծը մշակվել է Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի Հայաստանի Ներդրումային Խորհրդի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից:

Նախագիծը քննարկվել է ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ 12.04.2023 թվականին կայացած ՓՄՁ զարգացման խորհրդի նիստում՝ մասնավոր հատվածի և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: